



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 03 >> 03/04/2011 2011թ.
ք. Արմավիր

N 57

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011թ. հուլիսի 29-ի N260 որոշումը, <<Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին (Ա. Թովմասյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին (համաձայնությամբ):

3. Հանձնաժողովին (Ա. Թովմասյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Լ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի 2011 թվականի օգոստոսի <<03>>-ի
N 57 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թովմասյան

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի աշխատակազմի կրթության,
մշակույթի և սպորտի վարչության կրթության
բաժնի պետ.

Անդամներ՝

Հ. Հարությունյան

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի աշխատակազմի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության
ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ.

Ա. Առաքելյան

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի աշխատակազմի կրթության,
մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և
սպորտի բաժնի առաջատար մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ